

Ս. Ս. Աբրահամյան

ԲԱՅԱԿԱՆ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՌԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայոց լեզուն իր դրավոր գրականություններով և մանավանդ բարբառներով չափազանց հարուստ է կրկնավոր բառական բարդություններով: Դրանք արժանացել են ուսումնասիրողների ուշադրությանը: Այս ուղղությամբ առաջին լուրջ ուսումնասիրությունը պատկանում է Հ. Աճառյանին: Նկատի ունենք նրա «Հայերէնի բնածայն և կրկնաւոր բառերը» աշխատությունը¹, որտեղ փաստերը քննարկվում են հատկապես կրկնավորների արմատների պարզաբանման, ձևերի տիպավորման առումով: Այս ուսումնասիրության մեջ շեշտը դրված է գրաբարում (և մասամբ բարբառներում) գործածված կրկնավորների վրա: Հետագայում կրկնավոր բարդությունների տարբեր տեսակների նկարագիր են տալիս ուրիշ ուսումնասիրողներ², որոնք կարևոր գիտողություններ ունեն նաև բայական կրկնավորների մասին:

Այստեղ մեզ հետաքրքրում են բայական կրկնավորները: Դրանք հայերենում լինում են՝ ա) հարադրական կրկնություններ՝ բաղադրիչ հիմնական մասերի ձևային առանձնություններ, բայց իմաստային միավորումով, բ) ձևային ամբողջությամբ՝ բառական ձուլված միավորով: Այս հոգվածում կանգ կառնենք բայական այն կրկնավորների վրա, որոնք ամբողջական բառեր են ոչ միայն ըստ իմաստի, այլև ըստ ձևի միասնության:

Ինչպես վերև ակնարկվեց, կրկնավորներով առանձնապես հարուստ են հայ բարբառները, որտեղ ընդհանուր կրկնավորների գերակշռող մասը բայեր են: Ժամանակակից գրական հայերենը մեծ չափերով սգտվել և օգտվում է բարբառների կրկնավոր բայերից, բայց նա իր կազմում ունի նաև այնպիսի կրկնավոր բայեր, որոնք ժամանակին տեղ են գտել մեր հին գրական լեզվում՝ գրաբարում, որպիսիներից շատերը արտահայտություն ունեն նաև բարբառներում: Դրանք ժամանակակից գրական լեզվում արտահայտվում են ոչ միայն կազմության, այլև իմաստային տարբերություններով:

Բայական կրկնավորների կազմության, իմաստային, քերականական առանձնահատկությունների ճիշտ բացահայտման տեսակետից պահանջվում է ժամանակակից դրական հայերենում գործածվող այդպիսի ձուլված կրկնավորները ամենաընդհանուր գծերով բաժանել երկու հիմնական խմբերի կամ շեր-

¹ Հրապարակված է «Հանգէս ամսօրեայ»-ի 1899 թ. հուլիս-օգոստոս ամիսների համարներում, իսկ այնուհետև որոշ կրճատումներով տեղադրված է «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» աշխատության 3-րդ հատորում (Երևան, 1937, էջ 83—100):

² Հ.մ.տ. Մ. Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1931, էջ 185—186, Գ. Սևակ, «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն», գիրք Բ, Բառագիտություն, Երևան, 1947, էջ 66—67, 72—73, Ա. Մուրվալյան, «Հայոց լեզվի բառային կազմը», Երևան, 1955, էջ 147—162: Իսկ առանձնապես բարբառների կրկնավորների մասին խոսվում է բարբառագիտական շատ ուսումնասիրություններում մեջ:

տերի: Առաջին շերտի մեջ պետք է հաշվել այն կրկնավորները, որոնք դա-
լիս են շատ հնից, այսինքն կային գրարարում և գործածություն ունեն նաև
ժամանակակից գրական հայերենում: Երկրորդ կարելի է համարել համեմա-
տարար նոր շերտ, որն անմիջականորեն կապված լինելով բարբառների հետ
գրական լեզվում, սակայն, բավականաչափ կիրառվել և որոշ ավանդականու-
թյուն է ձևով բերել:

Կրկնավոր բառերը, որ իրենց մեջ ամփոփում են երկու արմատներ (ան-
փոփոխ կամ փոփոխված), արտահայտում են գործողության կամ եղելության
կրկնություն, բազմապատկություն, իմաստի սաստկություն, տեսականություն
և այլն, լեզվի զարգացման ընթացքում միշտ նույնությունամբ չեն պահպանում
հիշյալ նշանակությունները և կազմության ակնրախ ու պարզ որոշելիությունը:
Այս հիման վրա էլ գծագրվում են հիշատակված երկու շերտերի մեջ մտնող կրկն-
ավոր բառերի քերականական նշանակությունների տարբերությունները, իսկ
որոշ դեպքերում էլ ընդհանրությունները ժամանակակից գրական հայերենում:

Վերջենք այդ շերտերն առանձին-առանձին և դիտենք հիշված երե-
վույթները:

Նախ՝ հին շերտի կրկնավորների մասին: Սրանք իրենց հերթին ըստ կազ-
մության առանձնահատկությունների խմբավորվում են երկու հիմնական տեսակ-
ների մեջ: Առաջին տեսակն այն է, ուր արմատը կրկնվելով՝ պահպանում է իր
ամբողջականությունը. ախտեղ արմատի հիմնական պատկերը ալլակերպող
փոփոխություններ չեն առաջանում, բացի շերտի տեղափոխության հետևան-
քով առաջացած այն փոփոխություններից, որոնք հատուկ են հայերենին ոչ
միայն այս դեպքում, այլև ընդհանրապես, բառակազմական և թեքման երե-
վույթների ժամանակ:

Ժամանակակից հայերենում առկա հին շերտի այդպիսի կրկնավորներից
են՝ ալլալիկ, արծարծել, բեկբեկել, զեղզեղալ (<զեղզեղել), երերալ (|| երե-
րիմ), երերել (երերիմ), խլխլել, խողխողել, կերկերել, կցկցել, ձգձգել, շողշողալ
(<շողշողել), ողողել, ոստոստել (նաև ոստոստալ), չարչարել, ջախջախել,
փափախել, փողփողել (նաև փողփողալ), քայքայել, քրքրել և այլն:

Անլիճելի է, որ այս բառերը կազմված են արմատի կրկնությամբ: Այդ
երևում է հենց արտաքին տեսքից: Սակայն, երբ դրանք վերցնում ենք իմաս-
տի կրկնության և սրա հետ կապված բառի կազմության հանգամանքների
կենդանի լինելու տեսակետից, ըստ մեր լեզվական արդի զգացողության, ալլ-
ևս չենք հանդիպում միօրինակության, այս դեպքում դրությունը փոխվում է:

Բառերի մեջ արմատի կրկնությունը առաջին հերթին ենթադրում է
իմաստի կրկնություն, որ է գործողության կամ եղելության կրկնություն կամ
բազմապատկություն: Սակայն այս բառերից բոլորը չեն, որ ունեն այդ նշա-
նակությունը: Այդպիսի նշանակություն ունեն մի քանիսը: Այս տեսակետից
առաջին տեղում են այն բառերը, որոնք ժամանակակից գրական հայերենում
զուգահեռարար ունեն ոչ կրկնավոր տարբերակներ: Մեր թված բառերի մեջ
այդպիսիներն են՝ բեկբեկել, խլխլել, կցկցել, ձգձգել, շողշողալ, ոստոստել,
(հմտ. համապատասխան ոչ կրկնավոր զուգահեռները ժամանակակից գրա-
կանում՝ բեկել, խլել, կցել, ձգել, շողալ, ոստնել), ըստ որում գործողության
կամ եղելության կրկնությունն արտահայտվում է իրրեկ այնպիսի իմաստների
կրկնությամբ, որպիսիք կան ոչ կրկնավոր ձևերի մեջ, իսկ այդպիսի իմաստ-
ները, որոնք հնում եղել են այդ կրկնավորների մեջ, սակայն չկան ժամանա-

կառնից հայերենի ոչ կրկնավոր ձևերի մեջ, այժմ չեն պահպանվում նաև կրկնավորների մեջ:

Այս րաշխերն իրենց կենդանի իմաստներով ժամանակակից գրական հա-
շխերներում առկորակա՛ն կրկնափոխներ են: Մակաշն նուշնը չի կարելի առել ար-
ժարժել, զեղզեղալ, երերալ || երերել, խողխողել, կերկերել, ողողել, ջախջա-
խել, փաշփաշել, փողփողել, քաշքաշել, բքբքել րաշխի մասին: 'Ինն գրաբա-
րում էլ սրանցից մի քանիսի պարզական արմատները առանձին գործածու-
թյուն չեն ունեցել, ալլ հանգես են եկել կրկնությամբ, որպես մի ամբողջու-
թյուն, ինչպես՝ երեր, խողխողել, կերկերել [իմ], ողող, փաշփաշել, քաշքա-
շել, բքբքել. Իսկ արժ (կապում է արժնել րաշի արմատի հետ), զեղ (զեղել-
ցիկ երգ՝ նշանակությամբ զեղօն րառի մեջ), ջախ (ջախել կամ ջաղխել հազ-
վադեպ գործածված րաշի մեջ), փող (փաշլ արմատի տարրերակն է, գոր-
ծածվել է փողել ժառաղել՝ նորագոյուտ րաշի մեջ) արմատները թեև առանց
կրկնության այս կամ այն չափով արտահայտվել են գրաբարում, սակայն
ժամանակակից գրական լեզվում իբրև արմատ իրենց համապատասխան
իմաստներով առանձին չեն գիտակցվում, այստեղ դրանք գիտակցվում են
նույնպես կրկնափոխ ամբողջության մեջ, միասնաբար, հետևաբար մշուսների
հետ ժամանակակից գրական հաշխերներում չեն բմբունվում որպես կրկնափո-
շխեր և կրկնափոխ րաշխի հիմնական՝ կրկնական նշանակութունը չունեն:

Ճիշտ է, այս կարգի բայերը այժմ մեր գրական լեզվի համար այլևս բուն կրկնափորներ չեն՝ նախնական իմաստի ու կազմության միազնուամով, բայց և միաժամանակ պետք է նշել, որ սրանք որոշ չափով գործողության ինտենսիվություն են նշում: Այս երևույթը այս և ստորև բերվող այլ բայերի մեջ մենք բացատրում ենք համապատասխան հնչյունախմբերի կրկնություն (ջախջախեի, խողխողել, փողփողել[ալ], քրքրել և այլն), որոնք կրկնակիով՝ ազգում են գործողության իմաստի ընուլթի վրա:

Պազմությամբ ու իմաստով կենդանի կրկնավորներին ավելի մոտ են կանգնած ալլալել, չաբչաբել բաշերը, որոնք նախապես կապված են եղել ալլ և չաբ արմատների հետ, որոնք, ինչպես հայտնի է, այժմ էլ առանձին ըմբռնվում են որպես արմատներ: Պետք է խոստովանել, որ այժմ այդ արմատների նշանակութունը անմիջականորեն աչքի չի ընկնում այդ բաշերի մեջ, բայց ժամանակակից զբաղան լեզվում կենդանի իմաստներով այդ արմատների գործածությունը որոշ չափով հենարան է ծառայում նշված բաշերի համար: Մի կողմից այս և մյուս կողմից էլ համապատասխան հնչյունախմբերի կրկնությունը այս բաշերն ավելի են մոտեցնում նշանակությամբ կենդանի կրկնավորներին:

Հին շերտի երկրորդ աեսակի մեջ մտնում են այն կրկնավորները, որոնց կրկնվող արմատը որևէ տեղում ենթարկված է հնչյունական յուրահատուկ փոփոխության (չնաշված շեշտից կախված հնչյունափոխությունը), որպիսին առաջ է բերում արմատի զգալի ձևափոխություն: Այդ տիպի բաղերից հին հայերենից ժառանգված ունենք՝ աղավաղել (աղաւաղել), արհամարհել, բարախել, բարբառել, գրգռել, դադարել, զարհուրել, թոթափել (թաթափել), թոթալել, ծածանել, կախողել, կողկանձել, կաշկանդել, կարկատել, կարկատել, հալթալթել, հեծեծել^[ալ], հեկեկալ, հոռոռել, հորջորջել (յորջորջել), շոշափել (շաւշափել), պապանձել, սասանել, տատանել, տատամսել (տատամսիմ), փաթաթել, փոփոխել և այլն:

ձել, կաշկանդել, հալթալթել, հեկեկալ, հորջորջել, շոշափել, պապանձել, սասանել, տատամսել, տատանել բայերում: Ճիշտ է, կան աղ, շափ արմատների հետ ընդհանուր այլ և շուփ (շիփել) արմատներ, որոնք զործածություն ունեն նաև առանց կրկնության, սակայն հիշյալ ձևերը տարբերակվել և օտարացել են: Խոսք չի կարող լինել այն մասին, որ զրարարում արդեն միազերյվել էր այս արմատներով կազմված կրկնավորների բառական բաղադրությունը:

Մի քանիսի արմատներն էլ թեև առանց կրկնության զործածվել են, սակայն դրանցով կազմված կրկնավորները զրարարում էլ զգալի չափով հեռացել էին նույն արմատից և ամբողջականացել, ինչպես՝ բարբառ, դադար, թոթով, կարկառ: Պարզ է, որ աշխարհարարում առավել ևս սրանցից կազմված բայերը չեն կարող զործողության կամ եղելության դադարի կրկնման իմաստ ունենալ:

Ժամանակակից գրական հայերենում թեև ունենք քովել, բախել, կարել բայերը, սակայն չենք կարող նրանց սովորական կրկնավոր տիպերը համարել քոթովել, բաբախել, կարկատել բայերը, թեև իրականում այս երեքների կրկնավորների արմատները նույն բայերի քով, բախ, կար արմատներն են: Ինչո՞ւ որ հնության մեջ քովել բայը իմաստով հեռացել էր լիտսել, շշջալ՝ նախնական նշանակությունից, ձևք բերելով նախ լիտսելով՝ կարգալով կախարդել՝, ապա ընդհանրապես կախարդել՝ իմաստները: Ժամանակակից գրական հայերենում զործածվում է միայն վերջին իմաստով, ուստի և անմիջականորեն չի կապվում քոթովել բայի իմաստի հետ:

Շատ սովորական ու կենդանի է կար արմատը թե՛ իրեն անկախ արմատական բառ և թե՛ կարել բայի մեջ, սակայն կարկատել բայի մեջ մի կողմից արմատի ձևափոխությունը բարդության երկրորդ կողմում (ըստ ծագման) և մյուս կողմից էլ յուրահատուկ իմաստի ձևք բերումը մեզ թույլ չեն տալիս ժամանակակից հայերենում այդ բայը դիտել իրեն կրկնավոր:

Երեթե նույնպիսի վիճակում է բաբախել բայը, որը ժամանակակից հայերենում կորցնելով ներգործական սեռի նշանակությունը՝ զգալի չափով թուլացրել է կրկնականության իմաստը բախել ներգործական բայի հանդեպ: Այդ պատճառով էլ երբեք չի կարելի բախել բայը ժամանակակից հայերենում կրկնավոր ձևով արտահայտել ցանկացած դեպքում. օրինակ՝ զուռը բախել արտահայտությունն անհնարին է դարձնել զուռը բաբախել: Եվ, ընդհանրապես, սիրտը բաբախում է արտահայտությունը անսովոր կլինի սիրտը բախում է ձևով արտահայտել: Այս համեմատությունից երևում է, որ արդի ըմբռնողությամբ բաբախել բայը չի առնվում իրեն բախել բայի անմիջական կրկնավոր՝ նրա իմաստի կրկնման ամենալայն նշանակությամբ:

Ժամանակակից գրական հայերենում ընդունված սովորական կրկնավորներին հին շերտի այս տեսակի բայերից նշանակությամբ մոտենում են հեծեծել [ալ] և փոփոխել բայերը՝ համապատասխան հեծել և փոխել բայերի հանդեպ, թեև սրանք էլ ժամանակակից գրական հայերենի համար բառիս բուն իմաստով իսկական կրկնավորներ չեն: Սրանք պարզ ձևերի հանդեպ ունեն բառական իմաստի տարբեր երանգներ: Այսպես, հեծել նշանակում է՝ թ1. հառաչել, ախ ու վախ բաշել, հառաչելով վիշտն արտահայտել, 2. տառապել, հեծեծել՝ լաց ու կոծ անել, հառաչել, ախ ու վախ անել: Հեծեծել ձևի մեջ այժմ իշխում է լաց ու կոծ անել իմաստը: Փոխել բայը մեր լեզվում առկա է հարուստ իմաստներով, որոնցից կան և այնպիսիները, որպիսիք բնորոշ չեն փոփոխել ձևի

համար, օրինակ՝ ցորենը մրգի հետ փոխել (այսինքն փոխանակել) և նման տիպի արտահանությունների մեջ փոփոխել բայը չի կարող փոխարինել փոփոխել բային՝ իր կրկնության նշանակությամբ: Չենք ժխտում, որ շատ զեպքերում էլ նրանք բառական իմաստներով համընկնում են՝ միայն տարբերվելով ոչ կրկնական հանգամանքներով:

Շատ յուրահատուկ է հոտոտել բայը, որը իմաստով չի տարբերվում արդի կրկնավորներից, նշանակում է շատ անգամ և շատ տեղերից հոտ քաշել, ներդրածական բայ է: Ժամանակակից գրական լեզվում չկա հոտել ներդրածական նշանակությամբ Վհոտ քաշել, կա Վնելուելուց հոտ արձակել կամ փոխարեությամբ՝ Վիր արամագրությունը գցել, դժգոհ տեսք ընդունել իմաստներով իրեն չեզոք սեռի բայ: Պարզ է, որ առաջինը չի կարող համարվել այս բայի անմիջական կրկնավորը ժամանակակից հայերենում: Սակայն փաստն այն է, որ ժամանակակից գրական հայերենում հոտոտել բայը կիրառվում է կրկնական ու բազմապատկական իմաստներով: Մենք դա բացատրում ենք նրանով, որ այստեղ հոտ արմատի ձևափոխված ուտ տարբերակը ձևով համընկնելով բազմապատկական ուտ ածանցին, վերջինիս վրա իմաստային հենարան է գտնում և պահպանում է բազմապատկականության նշանակությունը:

Լնդհանրապես նկատելի է, որ կրկնավորների հին շերտի այս տեսակի բայերի մեջ կրկնական բաղադրության իմաստի միջանման գործում զգալի դեր է կատարել արմատի փոփոխությունը բաղադրության այս կամ այն եզրում. իսկ եթե այս երևույթը զուգակցվել է նաև այն հանգամանքին, որ որոշ արմատներ մեր լեզվի մեջ այլուստ հայտնի չեն մեզ, այլ միայն գործածություն ունեն հենց այս կազմությունների մեջ, ապա նրանցով կազմված բայերի կրկնական բաղադրությունն ու իմաստը արդի գրական լեզվում մեզ առավել միջանման են ներկայանում:

Կրկնական բաղադրության լրիվ միջանման ունեցող բայերից մի քանիսը որոշ չափով արտահանում են գործողության կամ եղելության գաղափարի ինտենսիվության երանգ, ինչպես՝ ծածանել, սասանել, տատանել, կաղկանձել, հեկեկալ և այլն, բայց ոչ երբեք կրկնականության կամ բազմապատկականության գաղափար: Իսկ արմատի և նրա իմաստի կրկնությամբ չենք կարող բացատրել, քանի որ սրանց պարզական արմատները այլևս առանձին չենք գիտակցում: Այդ երևույթը կարելի է բացատրել հնչյունական առանձնահատկություններով և մասամբ էլ գործողության կամ եղելության իրական բնույթով: Այսպիսի բայերի մեջ մի ժամանակ արմատի կրկնության հետևանքով առաջացած առանձին բնորոշ հնչյունների ու հնչյունախմբերի կրկնությունը նպաստում է իմաստի ինտենսիվ գրեկորմանը: Սրանցից որոշ չափով տարբերվում են քննարկվող տեսակի մեջ մտնող այն բայերը, որոնց չձևափոխված արմատները իրենց առանձնակի իմաստով ժամանակակից գրական հայերենում կենդանի են: Այդպիսի բայերի մասին արդեն խոսվեց վերը:

Նոր շերտի մեջ մտնում են ժամանակակից հայերենի բուն կրկնավորները, որոնք կամ նոր կազմություններ են, կամ էլ գալով բարբառներից՝ կիրառություն են ստացել գրական լեզվի մեջ: Դրանցից են՝ բոթբոթել կամ բոթբոթել, գզգզել, դադդել, դոդդողալ (այլն՝ դոդդողալ), թափթփել, խարխըրել, խաղխղել, խաղմղել, խղղղել, խղմղել, խնդմնդալ, ծալծլել, ծալծլել, ծակծկել, ծամծմել, ծեփծեփել կամ ծեփծեփել, ծոմոմել, կապկպել, կցմցել, հահալ, ճաքճքել, մաղմղել, մարմրել, մտմտալ, չափչփել, պահպնել, պաչպչել,

ջոկջկել (կամ ջոկջոկել), սողսողալ, վաղվղել, վախվխել, տաշտշել, ցուցլալ, փալլփլալ լել, փորփրել, քաշքշել, քսմսել և այլն:

Սրանցից վաղվղել և վախվխել բայերը թեև գրաբարում եղել են վաղ-վաղել և վախվախել ձևերով, սակայն ակնհայտորեն մտնում են այս շերտի մեջ, քանի որ, ինչպես ցույց է տալիս նրանց կադմոլոգները, բարբառներին հատուկ ձևափոխություն ունեն և անմիջականորեն դալիս են բարբառներից (կրկնություն մեջ ա ձայնավորի փոփոխությունը հատուկ է բարբառներին և սրանց ազդեցությունը էլ՝ աշխարհագրին):

Այս բայերի կադմոլոգյան ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանց մեծ մասին հատուկ են հնչյունական ուրույն փոփոխություններ: Այդ փոփոխություններն ընդգրկում են թե՛ արմատի ձայնավորները և թե՛ բաղա-ձայնները: Ձայնավորների յուրահատուկ փոփոխություններ են այնպիսիները, որոնք սովորաբար շեշտափոխության հետեանքով չեն առաջանում: Իրանք վերաբերում են ա, ե, ո հնչյուններին: Արմատի այս ձայնավորները փոփոխ-վելով՝ հնչվում են իրրի ը ձայնավոր:

Ընդհանրապես կարելի է ասել, որ կրկնության մեջ հիշյալ ձայնավոր-ների փոփոխությունը կատարվում է բարդության երկրորդ եզրում, սակայն բացառված չեն նաև առաջին եզրի փոփոխությունները: Ա ձայնավորի փո-փոխություն ունենք երկրորդ եզրում՝ դաղդղել, թափթփիլ, խարխրել, խազ-խըզել, խաղմղել, ծալծլել, ծախծխել, ծակծկել, ծամծմել, կապկպել, ճաքճը-քել, մաղմղել, մարմրել, չափչփել, պահպհել, պաչպչել, վաղվղել, վախվխել, տաշտշել, քաշքշել (այսինքն՝ դաղ+դաղ+ել—դաղդղել, թափ+թափ+ել—թափթփիլ, խար+խար+ել=խարխրել, խազ+խազ+ել=խազխըզել և այլն):

Այստեղ մենք ուրույն արմատ ենք ընդունում և այնպիսին, որը ծագե-լով հին հայերենի մի հայտնի արմատից՝ բարբառում յուրահատուկ ձևափո-խություն մեզ ներկայանում է իրրի առանձին տարբերակ. օրինակ, այդպիսի յուրահատուկ ձևափոխության արդյունք է նաք արմատաձևը: Մեզ թվում է, որ այն պատկանում է հայերենում շատ տարածված ճիւղ— ճեղ— ճիղ— ճուլ և ապա ք-ի հավելումով՝ ճեղք, ճուղք տարբերակների շարքին, որոնք ընդ-հանուր են ձևա-իմաստային կոդմերով: Այս շարքի մեջ պետք է ենթադրել երբևիցե ճաղք ձևը՝ իրրի այս շարքի ընդհանուր արմատի ստորին ձայնդար-ձով գոյացած մի տարբերակ, որը, ինչպես տեսնում ենք, պահպանվել է դ-ի անկումով՝ ճաք: Ծաքճըքլ կրկնավորի մեջ հանդես է գալիս նշված ձևով գո-յացած արմատի տարբերակը:

Ա ձայնավորի հիշյալ փոփոխությունն առաջին եզրում հազվադեպ է. այդպես է խղբղել, խղմղել բայերի մեջ, որտեղ փոփոխությունը կատարված է նաև երկրորդ եզրում: Իսկ լիայլիլալ լել բայում ա ձայնավորը փոփոխ-վել է այ երկհնչյունի կադմում՝ յ ձայնորդի հետ:

Հայերենում իրենց կայունությունը աչքի ընկնող ե և ո ձայնավորները ևս որոշ բայերում փոփոխության են ենթարկվում (նույնպես փոփոխվելով արտասանվում են ո), ինչպես՝ բոթրթել (<բոթ+բոթ+ել), դողդղալ (<դող-դող+ալ), ծեփծփել (<ծեփ+ծեփ+ել), ջոկջկել (<ջոկ+ջոկ+ել), ցուցլալ (<ցուլ+ցուլ+ալ), փորփրել (<փոր+փոր+ել): Բարդության առաջին եզ-րում սրանք փոփոխություն չունեն: Ինչպես կարելի է տեսնել վերը բերված օրինակներից, այս բայերը, բացի վերջին երկուսից, ունեն նաև չփոփոխված տարբերակներ՝ բոթրթել, դողդղալ, ծեփծեփել, ջոկջոկել:

Այս զուգահեռ ձևերի առկայությունը նշան է այն բանի, որ այս բայերը ժամանակակից գրական հայերենում դեռ լրիվ միօրինակության չեն հասել: Ոոսքը, իհարկե, չի վերաբերում ալոպիսիներին, որոնք զուգահեռ ձևեր չունեն արդի գրական լեզվում, այլ միաձև են (կամ փոփոխված, կամ էլ անփոփոխ), ինչպես սողսողալ, ցոլցոլալ, փոփոբել:

Սակայն այդ չի կարելի ասել և հիմնական ձայնավոր ունեցող արմատներով կազմված կրկնավորների մասին: Ժամանակակից գրական հայերենի ներկա շրջանում այս կարգի բայերի գործածությունը շատ որոշակի է դարձել, ուստի և հաստատ կերպով կարելի է արձանագրել միօրինակության հասած օրինաչափությունը այս բայերի մեջ և դրա հիման վրա էլ հանձնարարել այս կամ այն բայի գործածությունը:

Որոշակի իրողություն է և հիմնական ձայնավոր ունեցող արմատի կրկնություն զեպքում կրկնավոր բարդության երկրորդ կգրում ձայնավորի փոփոխությունը: Սա ընդհանուր օրինաչափություն է մեր արդի գրական լեզվի այս տիպի բայերի համար: Այս օրինաչափությունը, որ քարքառային հիմք ունի, ժամանակակից գրական լեզվում հաստատուն է դարձել, անշուշտ, որոշ ժամանակի ընթացքում, աստիճանական գործադրումով:

Այս օրինաչափության գոյության լավագույն ապացույցը մեր գրական լեզվում գործածություն ունեցող վերոհիշյալ բայերն են, սակայն իրողությունն առավել ցայտուն ու պարզորոշ է դառնում մեր հին գրավոր լեզվից մեզ ավանդված որոշ, թեկուզ և հազվադեպ, փաստերի համեմատությամբ: Վերը նշեցինք, որ գրաբարում գործածություն են ունեցել վազվազել և վախվախել բայերը: Սրանց դիմաց արդի գրական լեզուն գործածում է վազվզել և վախվիլել ձևերը, որոնք հստակ կերպով արտացոլում են հիշյալ օրինաչափությունը: Նույնիսկ այն բայերը, որոնք մի ժամանակ աշխարհաբարի մեջ գրաբարյան հիշյալ ձևերի նմանակությամբ գործածվել են առանց և ձայնավորի փոփոխության, հետագայում ենթարկվել են ընդհանուր օրինաչափության և հանդես են գալիս ձայնավորի փոփոխությամբ: Համեմատի՛ր՝ կապկապել. «Մինչ գիշերը անհանգիստ օրորոցում կապկապած Հալիս էի անհանգիստ...» (Մ. Նալբանդյան, «Երգ ազատության»), քաշքաշել. «... Եվ վատությունը միայն հարկադրել էր պ. Չամուռյանին քաշքաշելով մեր ասածը, ինկիզգիցիոն հանդես հանել» (Նույնը, «Երկու տող»), նաքնաքել. «Մանեն կողքից նայում էր նրա կնոջը... հին մազադաթի պես չորացած ու նաքնաքած ալտին...» (Նար-Նոս, «Պայքար», 1), կաթկաթել. «Անձրեն է կաթկաթում...» (Է. Աղայան, «Հովվի անկողինը»): Այժմ դրանք գործածվում են միայն կաթկաթել, կապկապել, նաքնաքել, քաշքաշել ձևերով:

Նկարագրված հնչյունական փոփոխությունները, իհարկե, զուգակցվում են շեշտի տեղափոխության երևույթի հետ, սակայն այստեղ բնորոշն այն է, որ մատնացույց արված ձայնավորները այլ պայմաններում (կրկնավորներից դուրս) ժամանակակից հայերենում շեշտի տեղափոխությամբ այսպիսի ձևափոխության չեն ենթարկվում, չեն վերածվում ը ձայնավորի: Իսկ այն ձայնավորները, որոնք ընդհանրապես շեշտի տեղափոխությամբ փոփոխությունների են ենթարկվում, այստեղ ևս կրում են փոփոխություններ: Սակայն կրկնավորների մեջ նրանց ուղեկցում է մի ուրիշ յուրահատկություն. դա այն է, որ արմատի փոփոխվող ձայնավորը շեշտի ազդեցությամբ անպայմանորեն փոխվում է բարդության թե՛ առաջին և թե՛ երկրորդ կգրում, ինչպես՝

խինդ + խինդ + ալ > խնդմնդալ, կից + կից + ել > կցկցել: Տվյալ դեպքում ունենք ի > ք հնչյունափոխությունը, քակ ծոմոնել բայի մեջ ունենք ու > ք հնչյունափոխությունը՝ ծուռ + ծուռ + ել > ծռռռել: Երբ արմատը կրկնվում է, կատարվում է շեշտի տեղափոխություն, և առաջին եզրում փոփոխվում է ձայնավորը, իսկ երբ այս կրկնակ արմատների վրա վերջից ավելանում է բայական բաղադրիչ մասնիկը, շեշտն ընկնում է իր վրա, արմատի ձայնավորը բարդության երկրորդ եզրում նորից շեշտակորույս է լինում և ենթարկվում փոփոխության, այսպիսով՝ ձայնավորի փոփոխությունը կատարվում է երկու տեղ՝ կրկնվող արմատներում:

Վննարկվող շերտի կրկնավոր բայերի մեջ նկատելի են նաև բաղաձայն հնչյունների որոշ փոփոխություններ, որոնք, սակայն, չեն ընդգրկում բոլոր արմատները: Այդպիսի փոփոխություններ բերված բայերից ունեն՝ խաղմդել, խղղղել, խղմղել, խնդմնդալ, ծոմոնել, կցմցել, քսմսել: Փոփոխությունն արատահայտվում է նրանով, որ արմատի առաջին բաղաձայնը կրկնության երկրորդ եզրում վերածվում է կա՛մ մ-ի, կա՛մ ք-ի:

Բայական կրկնավորների մեջ երևան եկող հնչյունափոխական այս երևույթները սերտորեն կապված են հայերենի ընդհանուր կրկնավոր բարդությունների կաղմության բնորոշ կողմերի հետ, որոնց քննարկումը մեր նպատակից դուրս է:

Մեր գրական լեզվում այս կարգի կրկնավորների գործածությունը հավաստելու նպատակով հիշատակենք բնագրային մի քանի օրինակներ: Շէ՛նկերոջ հեռանալուց հետո նա սխալ կարգի բերել յուր իրեղենները և կապկրվել» (Մուրացան, «Առաքյալը», Զ): «Երթակա ափերը փայլվում էին ոսկու պես...» (նույն տեղ, ԺԻ): «-- Տատի՛կ, տատի՛կ, պոչս տուր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ...» (Հ. Թումանյան, «Պոչատ աղվեսը»): «Դահլիճում գտնված մարդիկ... շտապում էին դեպի դուրս, դռան մոտ ամբոխվելով և իրար բոքրոյելով» (Նար-Դոս, «Մահը», 1-ին մ., լավ): «Հողմերն անհեթեթ ջինների նման՝ Արու-Լալայի խոժոռած դեմքին Կրքըում էին, ծափ տալիս, ծաղրում և ապարոշից քաշքշում ուժգին» (Այ. Իսահակյան, «Արու-Լալա Մահարի», IV): «... Օղն էին վերև ծալվելով իրենց նիզակներով» (Գ. Դեմիրճյան, «Վարդանանք»): «— Մատյանին որ հասանք, գնամ գլխիս մոխիր ածեմ,— չհամբերեց նյութալավուրտը՝ շրթունքների մեջ ծամծամելով մի քանի կոշտ զինվորական հայհոյանքներ» (նույն տեղ): «... Առած հետները ցցեր, կացին՝ Իր հին ափերը չափչփեցին» (Ե. Չարենց, «Չուղուն մարդը»): «Բայց դեռ մարմրում է իմ դեմ մի վերջալույս...» (Գ. Սարյան, «Վերջալույս»): «Նա ամբողջ մարմնով դողդողում էր...» (Վ. Անանյան, «Հայածվածները», 2) և այլն:

Մեր լեզվում մեծ հարստություն են կաղմում բնաձայն բայական կրկնավորները, որոնք տարածում ունեն նրա պատմական տարրեր շրջաններում ու բարբառներում: Սրանց գործածության մեջ առավել ճոխություն արձքի են ընկնում բարբառները:

Ժամանակակից արևելահայ գրական լեզուն բայական բնաձայն կրկնավորների օգտագործման տեսակետից ևս ցուցաբերում է իր սերտ կապը բարբառների հետ:

Պետք է նկատել, որ գրաբարից եկող երբեմնի բնաձայն կրկնավոր բայերը ժամանակակից գրական հայերենում շատ սակավ են: Ասենք, գրաբար-Տեղեկագիր 4--4

րում էլ դրանք սակավ էին: Դրանցից ժամանակակից գրական լեզվում գործածություն ունեն՝ խոխոջել, խրխնջալ (գրար. խրխնջալ, խրխնճալ, խրրխնջել, խխնջել), կարկաչել (գրար. կարկաչել, կարկաջել), հախոջել, մոմռալ (գրար. մոմռալ, մրմռալ, մոմռել), մրմնջալ (գրար. մրմնջել), շշնջալ (գրար. շշնջել): Սրանցից կան ալոպոսիները, որոնք այժմ հանդես են գալիս իմաստային փոփոխություններ (լծորդությունների փոփոխություններն էլ ակներև են). օրինակ՝ խրխնջալ, ասվում է գերազանցապես ձիու յուրահատուկ ձայն հանելու համար, իսկ մարդու գոռալու կամ բարձր ծիծաղելու համար կարող է ասվել միայն փոխարևրաբար. կամ կարկաչել անցյալում նշանակել է՝ 1. ճվճվալ (թռչունների), 2. կանչել (աքաղաղի), 3. քրքջալ, 4. ցրտից ատամները իրար խփել, իսկ այժմ ասվում է միայն հոսող ջրի ձայն հանելու համար, ծիծաղի մասին ասվում է փոխարևրաբար: Մրմնջալ բայն այժմ չունի «հառաչել, մտմտալ» իմաստները, որպիսիք ունեն գրաբարում՝ «քթի տակ երգել, փսփսալ, տրտնջալ» իմաստների հետ. այժմ կենդանի են այս վերջին իմաստները:

Ըր կազմությունը և բառական-քերականական նշանակությամբ ժամանակակից գրական հայերենի համար սրանցից բնածայն բուն կրկնավոր կարող է համարվել մոմռալ բայը, որի մեջ մ արմատը ու սաստկական տարրի հետ մի ամբողջություն է կազմել և կրկնվել. ալոպոսի կրկնությունը կենդանի ու օրինաչափ է ժամանակակից գրական հայերենի համար:

Նիշատակված մյուս բայերը ժամանակակից գրական հայերենի համար իրենց նշանակությամբ ու կազմությամբ չեն կարող բուն կրկնավորներ համարվել: Մեր լեզվի պատմության մեջ այս բայերի կրկնավոր լինելը միշտ չի բնորոշվել բուն կրկնական նշանակությամբ: Իսկ եղել է մի ժամանակաշրջան, որ դրանք հանդես են եկել իրենց կրկնավոր բայեր: Այդ է ցույց տալիս նրանց կազմության վերլուծությունը: Խրխնջալ բայի սկզբնական արմատն է խ, որը կրկնված է և զուգակցված ք, ց, ջ տարրերով, նույն արմատը կա խոխոջել բայի մեջ կրկնված, բաղադրության մյուս կազմիչ տարրն է ջ՝ միավորված ու ձայնավորով. կարկաչել բայի մեջ կրկնված արմատն է կ՝ բաղադրված չ տարրով և միավորված ա ձայնավորով: Մրմնջալ բայի մեջ կրկնված է մ արմատը. բաղադրիչ տարրերն են վերոհիշյալ ք, ց, ջ տարրերը, որոնցից վերջին երկուսը կան նաև շշնջալ բայի մեջ, ուր կրկնված է շ արմատը (սովյալներն ըստ «Հայերէն արմատական բառարան»-ի են):

Արմատների և կազմիչ այլ տարրերի յուրահատուկ միահյուսումը ու նրանց առանձին և ամփոփ իմաստների միազնումը ժամանակի ընթացքում հանգեցրել են այն բանին, որ այդ բայերն այլևս չեն գիտակցվում որպես կրկնավոր բարդություններ, ուստի և ժամանակակից հայերենի համար (և ոչ միայն ժամանակակից հայերենի) չունեն բուն կրկնականություն քերականական նշանակությունը:

Հնից եկող ալոպոսի բայերից իրենց կազմությամբ ու նշանակությամբ ակնհայտորեն տարբերվում են ժամանակակից հայերենում գործածություն ունեցող բնածայն բուն կրկնավոր բայերը, որոնք խոսակցական-բարբառային ներգրման արդյունք են: Դրանցից են՝ բխկրխկալ, բղրղալ, բոբռալ, բոթբոթալ, գմփղմփալ, գոչգոչալ, դոդոդալ, գոդոդալ, գոմոմալ, դվդվալ, դզզզալ, դխկխկալ, դմրդմրալ, դմփդմփալ, դնգդնգալ, դնդնալ, դոդոալ, դվդվալ, դմրդմրալ, դմփդմփալ, դնգդնգալ, զլզլալ, զխկխկալ, զմզմալ, զըմը-

դրմբալ, դմիգմիալ, դնգզնգալ, դոգոալ, դրմիդրմիալ, դրնգզրնգալ, թխկթխալ, թրխկթրխալ, թմիթմիալ, թրմիթրմիալ, խնկխնալ, իշթշալ, թսթրսալ, թիթիալ, ժնգժնգալ, լխկլխալ, լլկլալ, լլզլզալ, ընգընգալ, լիլիալ, լըքլըքալ, խզխզալ, խթխթալ, խժժալ, խժվալ, խլթխլթալ, խշխշալ, խոթխոթալ, խոխոալ, խրթխրթալ, ծլթծլթալ, ծլծլալ, ծլլլալ, ծնգծնգալ, ծվծվալ, **կլթկլթալ**, կկլալ, կզկզալ, կմկմալ, կնծկնծալ, կշկշալ, կոթկոթալ, կոկոալ, կվկվալ կսկսալ, կրկրալ, կոչկոչալ, հոհոալ, դոդոալ, դովոալ, ճգճալ, ճլճալ, ճլլլալ, ճչկչալ, ճղղալ, ճնկճնկալ, ճպճպալ, ճոճոթալ ճրթճրթալ, ճոճոալ, ճովոալ, ճվճվալ, ճսոճսոալ, ճսովսոալ, ճոճոալ, ճպոճպալ, ճսվսալ, մգմրգալ, մլմլալ, մշմշալ, մոթմոթալ || մրթմրթալ, նոնոալ, նմնմալ, շխշխալ, շնշնկալ, շրխշրխալ, շիշիալ, չմիչնմիալ, չխչխալ, չոչոալ, չրխչրխալ, չիչիալ, պղպղալ, պժպժալ, պճպճալ, սլսլալ, սնգսնգալ, սրթսրթալ, սխսխալ, վզվզալ, վթվթալ, վժվժալ, վլվլալ, ֆիզֆիզալ, վշվշալ, վսվսալ, վսվսալ, արդւլըդալ, տզտզալ, տժվժալ, տժոժալ, տխտխալ, տմրտմրալ, տնքտնքալ, տրմրտրմրալ, փթփթալ, փնթփնթալ, փնքփնքալ, փշիշալ, փրթփրթալ, փսփսալ, քթքթալ, քլթքլթալ, քշիշալ, քշքշալ, քսոքսոալ, քիքիալ, ֆշֆշալ, ֆսոֆսոալ, ֆսֆսալ և այլն:

Վերը նշեցինք, որ ընդհանրապես բաշական (և ըջ միայն բաշական) կրկնավորները մեծ մասամբ հատուկ են խոսակցական լեզվին ու բարբառներին: Սակայն բոլոր կրկնավոր բաշերի մեջ բնաձայնական կրկնավորները առավել ևս խոսակցական-բարբառային բնույթ ունեն: Գրական լեզուն հաճախ է օգտվում գրանցից, որոնք աշխուժություն, ցայտուն կենդանություն են տալիս խոսքին: Բերենք բնագրային մի քանի օրինակներ, որոնք հավաստելով բնաձայնական բաշական կրկնավորների գործածությունը՝ միաժամանակ երևան են բերում նրանց քերականական-իմաստաբանական դերը գրավոր խոսքում: Շնորհք... մի-մի գիրք առած կարգում էին, երբեմն կամացուկ, երբեմն մոմռալով...» (Մուրացան, «Առաքյալը», ԺԴ): «Երկայն տերողորմչալի սև ու խոշոր հատիկները կանոնավոր կերպով պտույտ տալով նրա ձեռքում, չխլչխկում էին միատեսակ ձայնով» (Շիրվանզադե, «Նամուս», III): «... Մա-րիամ բաջին և Բյուշնազը, քիթ-քիթ տված, ընթրիքի պատրաստության էին տեսնում, երբեմն իրարու հետ քշվչալով...» (Նույն տեղ): «Երեք նոր սկսել էր հալիլ գիշերը կառուների վրա նստած եղյամը, որն այժմ ջուր դառած կտկտալով թափվում էր երկայն ջրախողովակներով ներքև...» (Նար-Դոս, «Նեղ օրերից մեկը», 2): «... Մվծվում էր մկան պես...» (Նույնը, «Պայքար», XVIII): «Զանգը երրորդ անգամ զրնգզրնգաց» (Նույնը, «Մահը», 1-ին մ., XXI): «Վառարանում ճրթճրթում էր կրակը» (Նույնը, «Սպանված աղավին», 2-րդ մ., XII): «Զուրը վշշում է, քշքշում» (Դ. Դեմիրճյան, «Սաթոն»): «... Քա-միններ էին փչում անընդհատ... գեղերի խոտը ցրիվ էին տալիս բակերում և, վնգվնգում շարունակ» (Սո. Զորյան, «Հեղկոմի նախագահը», 1): «Սրբայրքում են սև սոսիները, փսփսում են ասիս խավարին...» (Ե. Զարենց, «Լենինն ու Ալին», VI): «Քրճիթի հին գուռը ճռճաց...» (Ա. Բակունց, «Սպիտակ ձին», 2) և այլն:

Բնածախնական կրկնավոր բալեր շատ սիրել է դործածել մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը: Նրա գործածած այդ կարգի բալերից են՝ *Կողբողալ, գողողալ, զլլալ, զնգզնգալ, խախալ, ծվվալ, կղկղալ, կռկռալ, ճղճղալ, մըրթմըրթալ, շնկշնկալ, սլալալ, վշվշալ, տմրամբալ և այլն:*

ժամանակակից հայերենում այս բնաձայնական կրկնավոր բայերի բացահայտ կրկնական իմաստները սերտորեն կապված են այն իրողության հետ, որ այժմ իբրև արմատ ներկայացող հնչյունախմբերը նրանց մեջ հեշտությամբ առանձնանում ու գիտակցվում են: Կրկնվող տարրերը որոշելու համար լեզվական հատուկ վերլուծություն չի պահանջվում: Իսկ երբ արմատը գիտակցվում է ամբողջ բառի կազմության մեջ՝ տվյալ դեպքում կրկնված ձևով, պարզ է, որ նրա համապատասխան իմաստն էլ ներկայանում է կրկնությամբ, և այսպիսով բայական բառույթը հանդես է գալիս ինչպես կազմության, այնպես էլ իմաստային կրկնական արժեքով:

Այս տեսակետից կարևոր է այն հարցը, թե տեսականորեն կարելի է բոլոր բաղադրիչ հնչյուններն ընդունել կրկնվող արմատի անբաժանելի տարրեր:

Վերը հիշատակված ուսումնասիրության մեջ Հ. Աճառյանը բնաձայն բառերի համար արմատ է համարում համապատասխան բառի առաջին բաղաձայնը⁴: Դա միանգամայն ճիշտ է ծագումնաբանական տեսակետից: Սակայն այս կարգի կրկնավոր բնաձայն բայերի մեջ մեր լեզվական արդի դրությամբ մենք իբրև արմատ ենք գիտակցում կրկնվող հնչյունախմբերը իրենց հիմնական տարրերով (դա չի ժխտում նաև Հ. Աճառյանը, մանավանդ որ առանձնացնելով այսպիսի մի շարք կրկնավորներ՝ կազմության առումով դուգահեռ է անցկացնում նրանց և ոչ բնաձայն կրկնավորների միջև): Ընդունելով, որ բայական այս կրկնավորների մեջ արդի բարենորոգությամբ իբրև արմատ ճանաչում ունեն հնչյունախմբերը, տեսնենք, թե ինչպիսի՞ հնչյուններ են կապակցվում միմյանց հետ և բաղադրում այդ բայարմատները: Նկատի ունենալով զրական լեզվում այս կամ այն չափով դործածվող բնաձայնական կրկնավոր բայերը՝ տեսնում ենք հնչյունների հետևյալ կապակցությունները արմատների մեջ. արմատներն սկսվում են բ, գ, դ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, զ, ճ, մ, ն, շ, չ, պ, ս, վ, տ, փ, ք, ֆ բաղաձայններից որևէ մեկով. այս բաղաձայններին հաջորդում են մեկական, երկական և սակավ դեպքերում էլ՝ երեքական բաղաձայններ, այսպես՝ բ+խ+կ, բ+դ, բ+ռ (բխկ, բդ, բռ), դ+մ+փ, դ+ռ, դ+լ (դմփ, դռ, դլ, ձայնավորների հետ նաև գռչ, գռռ), դ+դ, դ+խ+կ, դ+մ+բ, դ+մ+փ, դ+ն, դ+ն+դ, դ+ս, դ+լ, դ+բ+մ+բ, դ+բ+մ+փ, դ+բ+ն+դ (դդ, դխկ, դմբ, դմփ, դն, դնդ, դռ, դլ, դբմբ, դբմփ, դբնդ), դ+լ, դ+խ+կ, դ+մ, դ+մ+բ, դ+մ+փ, դ+ն+դ, դ+ռ, դ+բ+մ+փ, դ+բ+ն+դ (դլ, դխկ, դմ, դմբ, դմփ, դնդ, դռ, դբմփ, դբնդ), թ+խ+կ, թ+մ+փ, թ+բ+խ+կ, թ+բ+մ+փ, թ+ն+կ, թ+շ, թ+ս, թ+փ (թխկ, թմփ, թբխկ, թբմփ, թբնկ, թշ, թս, թփ), ժ+ն+դ (ժնդ), լ+խ+կ, լ+կ, լ+դ, լ+ն+դ, լ+փ, լ+ք, (լխկ, լկ, լդ, լնդ, լփ, լք), խ+դ, խ+թ, խ+ժ, խ+լ+թ, խ+շ, խ+ս+թ, խ+ռ, խ+բ+թ (խդ, խթ, խժ, խլթ, խշ, խս, խթ, խբթ), ծ+լ, ծ+լ+թ, ծ+ն+դ, ծ+լ (ծլ, ծլթ, ծնդ, ծլ), կ+լ, կ+լ+թ, կ+դ, կ+մ, կ+ն+ծ, կ+չ, կ+ռ, կ+ռ+թ, կ+լ, կ+տ, կ+բ, կ+բ+չ, (կլ, կլթ, կդ, կմ, կնծ, կչ, կռ, կռթ, կլ, կտ, կբ, կբչ), հ+ռ (հռ), դ+ռ (դռ), ճ+դ, ճ+թ, ճ+լ, ճ+լ+թ, ճ+կ, ճ+դ, ճ+ն+կ, ճ+պ, ճ+ռ, ճ+ռ+թ, ճ+ս+տ, ճ+լ, ճ+տ, ճ+բ+թ, ճ+փ, ճ+ք (ճդ, ճթ, ճլ, ճլթ, ճկ, ճդ, ճնկ, ճպ, ճռ, ճռթ, ճստ, ճլ, ճտ, ճբթ, ճփ, ճք), մ+դ, մ+կ, մ+շ, մ+ռ, մ+ռ+թ, մ+բ+թ (մդ, մկ, մշ, մռ, մռթ, մբթ), ն+ռ

⁴ Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1800, հուլիս-օգոստոս, էջ 208:

(նո), ն+ւլ (նւլ), շ+խ+կ, շ+ն+կ, շ+ր+խ+կ, շ+փ (շխկ, շնկ, շրխկ, շփ), պ+դ, պ+ժ, պ+ճ (պդ, պժ, պճ), ս+լ, ս+ս+դ, ս+վ, ս+ր+թ, (սլ, սնդ, սվ, սրթ), վ+դ, վ+թ, վ+ժ, վ+լ, վ+ն+դ, վ+շ, վ+ս, վ+տ (վդ, վթ, վժ, վլ, վնդ, վշ, վս, վտ), տ+դ, տ+ժ, տ+կ, տ+մ+ր, տ+ն+ք (տդ, տժ, տկ, տմք, տնք), փ+թ, փ+ն+թ, փ+ն+չ, փ+ն+ք, փ+շ, փ+ր+թ, փ+ս (փթ, փնթ, փնչ, փնք, փշ, փրթ, փս), ք+թ, ք+լ+թ, ք+չ, ք+ս+տ, ք+փ (քթ, քլթ, քչ, քստ, քփ), ֆ+շ, ֆ+ս, ֆ+ս+տ (ֆշ, ֆս, ֆոտ):

Այս ձևով գոյացած բնաձայնական արմատների մեջ կան որոշ տարրեր, որոնք բնագնանուր են շատ ձևերի համար: Հատկապես նկատի ունենք սաստկացուցիչ տարրերը, որոնցից հենց այժմ էլ կենդանի է ր, ռ և լ հնչյունների ածանցական նշանակությունը. դրանք յուրահատուկ ածանցներ են, որոնք համապատասխան արմատներում բառակազմական նշանակություն ունեն: Հմմտ. դմր-դրմր, դմփ-դրմփ, դնդ-դրնդ, դմփ-դրմփ, դնդ-դլնդ, թխկ-թրխկ, թմփ-թրմփ, շխկ-շրխկ, չխկ-չրխկ, փթ-փրթ և այլն: Որոշ արմատներում ր-ի փոխարեն հանդիպում է ռ հնչյունը, և այսպիսով առաջ են գալիս զուգահեռ արմատաձևեր, ինչպես՝ խթ-խոթ, խրթ, ճխ-ճոթ, ճրթ և այլն: Ի-ի զորացուցիչ դերը ամբողջական ձևերի ցայտուն է ր-ի համեմատությամբ: Հետևյալ օրինակները երևան են բերում լ-ի ածանցական դերը՝ խթ-խլթ, ճխ-ճլթ, չլմփ, քլթ-քլթ և այլն: Մագուճնարանորեն կարելի է ցույց տալ ուրիշ երբևի՜ն ալգպիսի ածանցներ էլ, սակայն ժամանակակից հայերենում դրանք այլևս չեն գիտակցվում ածանցական նշանակությամբ և ձուլված են արմատներին:

Պատմականորեն մոտենալով խնդրին՝ կարելի է ներկայացնել այս արմատների գոյացման ճանապարհը հետևյալ կերպ. նախապես էական արմատը կղև է առաջին բաղաձայնը, որը միացել է մի ուրիշ բաղաձայնի հետ՝ առաջ բերելով բնաձայնական արմատ (ինչպես՝ թփ, ճկ, չփ, տք և այլն), իսկ հետագայում այդ արմատները հարստացել են նաև այլ հնչյուններով (ինչպես՝ թմփ, ճնկ, չմփ, տնք և այլն) կամ էլ չընդունելով որևէ նոր հնչյուն՝ մնացել են զույգ հնչյունով (ինչպես՝ ծվ, ճպ, ճզ, մզ, վժ և այլն): Հետագայում այնպեղացած հնչյունները, անշուշտ, ածանցական յուրահատուկ նշանակություն են ունեցել, բայց աստիճանաբար ձուլվել են արմատներին: Այժմ կենդանի է միայն մի քանիսի ածանցական դերը, որոնց մասին խոսվեց:

Ժամանակակից հայերենում քննարկվող բնաձայնական կրկնավոր բայերի մեջ իրեն կրկնվող արմատներ պետք է ընդունել այս ճանապարհով վաղուց արդեն ձևավորված արմատները: Որոշակի պատկերացում կազմելով այս կարգի բնաձայնական արմատների մասին՝ կարելի է մատնացույց անել կրկնավոր որոշ բայերի մեջ որոշակի պատկեր ունեցող առանձին արմատների կրած հնչյունական որոշ փոփոխություններ՝ առաջացած հնչյունափոխական հանգամանքներով:

Որոշ ձևերի մեջ ձայնեղ և շնչեղ խուլ զուգահեռ հնչյունների գործածությունը (դմր || դմփ, դրմր || դրմփ և այլն) չի կարելի բացատրել միայն բարբառային տարրերություններով, դրանք իրեն բնաձայնական արմատներ իմաստային որոշ ներթափանցում են արտահայտում:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ իրեն եզրակացություն պետք է նշել հետևյալը.

1. Ժամանակակից հայերենի բայական բառակազմարի մեջ զգալի տեղ են զբաղում ամբողջական բառաձևերով արտահայտվող կրկնավոր բայերը՝ ար-

մատի կրկնությունը: Այդպիսի բայերի կազմությունն ու գործածությունը սերտորեն կապված են բառական ու քերականական չորահատուկ իմաստների արտահայտման հանգամանքի հետ: Դրանցով գրսևորվում են գործողության (կամ եղելության) կրկնություն, բազմապատկություն, ուժգնություն, տևականություն և այլն:

2. Ժամանակակից հայերենը բայական կրկնավորների գործադրման խոնդրում օգտվում է թե՛ հին հայերենի և թե՛ ժամանակակից խոսակցական-բարբառային նյութից: Փաստերի ուսումնասիրությունը երևան է հանում բայական կրկնավորների երկու շերտ՝ հին և համեմատաբար նոր, որոնք կապված են այդ ակունքների հետ: Ժամանակակից հայերենի համար թե՛ կազմության և թե՛ իմաստի տեսակետից բուն կրկնավորներ են համեմատաբար նոր շերտի մեջ մտնող կրկնավորները, իսկ հին շերտից՝ ոչ բոլորը, այլ աչնպիսիները, որոնց իմաստները նորոգված են կա՛մ հենց ամբողջական, կա՛մ էլ մի մասնավոր իմաստով ժամանակակից հայերենում առկա են իրեն կրկնավոր ոչ թե լուր ձևով, այլև նշանակությամբ:

3. Բայական կրկնավորների արժեքավորման համար կազմության ու ձևի հետ կարևոր են նաև իմաստները, քանի որ երբեմն բացահայտ կրկնական ձևը չի ընկալվում բուն կրկնական իմաստով (հատկապես հին շերտի բայերի մեջ): Կրկնականության որոշումը հենվում է արմատի առանձին, անկախ գիտակցման ու ինքնուրույն գործածության վրա: Առանձնապես կարևոր է արմատի առանձին գործածությունը բայական ոչ կրկնավոր ձևերի մեջ, որոնց գույադրությամբ ընդգծվում է համապատասխան կրկնավորի նշանակությունը:

4. Բայական կրկնավորները լինում են ոչ բնածայնական և բնածայնական, ըստ որում զգալի գերակշռություն ունեն բնածայնական կրկնավոր բայերը ժամանակակից հայերենում: Բնածայնականների մեջ էլ տարբերվում են հին և նոր շերտեր: Հին շերտի երբեմնի կրկնավորները, չնչին բացառությամբ, ժամանակակից դրական հայերենում այլևս չեն ճանաչվում իրեն բուն կրկնավորներ, կատարվել է կրկնվող արմատի և գույակցվող այլ բաղադրիչների ձուլում և կազմության մթաղնում: Կազմությամբ ու կրկնական իմաստով ժամանակակից հայերենի համար բուն կրկնավորներ են նոր շերտի բնածայնական կրկնավորները, որոնց համար իրեն արմատ են ծառայում ոչ միայն առաջին մեկական բաղադրյալները, այլև նրանց հարող այլ հնչյուններ (որոշ դեպքերում գորացուցիչ ածանցներով):

5. Ժամանակակից հայերենի համար կազմությամբ ու իմաստով կենդանի բուն կրկնավորները առավելապես խոսակցական և բարբառային բնույթ ունեն: Այդպիսի տպավորություն են թողնում հատկապես հնչյունական չորահատուկ փոփոխություններ ունեցողները և բնածայնականները: Սակայն դասական և ժամանակակից գրողներից բերված փաստերը ցույց են տալիս, որ դրական լեզուն չի խորշում դրանցից, այլ ընդհակառակն, օգտվում է դրանցից լեզվի համապատասխան իմաստների արտահայտման, այնպես էլ խոսքի ոճին աշխուժություն և ցայտուն կենդանություն տալու համար, որպիսի հատկանիշներով օժտված են այս բայերը: Որոշ բնորոշությամբ դրական լեզուն դրանք աշխատում է բարձրացնել խոսակցական-բարբառայինից մշակված դրականի մակարդակին: